ISSN 1829-0361

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(13)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(13)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(13)

YEREVAN 2024 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(13)

ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Նելլի Կարապետյան – *պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Եսայան

Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում 8

Իրինա Բաղալյան

Այլախոհական և իրավապաշտպան շարժումները
խորհրդային հայաստանում 1960–1980-ական թվականներին 19

Սամվել Պողոսյան

Տիրան արք. Ներսոյանի արխիվը Երուսաղեմի
Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում (տեղեկագիր) 37

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Եվաղյան

Նախնական դիտարկումներ Միտրիդատ I թագավորի դրամի մասին,
չհրապարակված կորպուս և մտորումներ նրա թագավորական
գաղափարախոսության մասին 52

ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

Հայկական գաղթավայրերից մի քանիսի ոսկերիչները 70

Հրազդան Թոքմաջյան

Պաշտամունքային կառույցները ասեղնագործություններում 92

Արփակ Ասատրյան

Խորանազարդ սինիներ (ըստ ՀԱԹ, ՀՊԹ, ԵՔՊԹ, ԿԵԹ և ԴԵԹ նյութերի) 99

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Լիաննա Գևորգյան

Ձանգվածային մշակութային միջոցառումները որպես
ժամանակակից թանգարանի գործունեության ակտիվացման միջոց 122

Մեդա Գալստյան

Հավերժի ճամփորդներ. Անկատար երազանքներ ցուցադրությունը 136

Տաթևիկ Մարոյան

Սուրճի առօրեականության պատմության թանգարանային
ներկայացումը և շարունակական կրթության բաղադրիչը 149

Մանե Խառատյան

Ճապոնական ոսկիյո-է գրաֆիկական աշխատանքների
ՀՊԹ-ում պահվող հավաքածուն 164

Ասպղիկ Սիմոնյան

Հնագիտական առարկաների վերականգնում. խեցեղենի
վերականգնման առանձնահատկությունները 192

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 199

DOI:10.56653/18290361-2024.13-149

Տաթևիկ Սարոյան

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ
saroyantatev@gmail.com

ՍՈՒՐՃԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ*

Հիմնաբառեր. թանգարանագիտություն, կրթություն, ցուցադրություն, համադրություն, մարքեթինգ-դրամահավաք, ուսումնասիրություն, սուրճ:

Ներածություն

Սուրճն աշխարհի երեք ամենատարածված ըմպելիքներից է (ջրի և թեյի կողքին) և միջազգային ապրանքներից ամենաեկամտաբերներից մեկը: Այն ունի դարավոր պատմություն. միշտ պահպանել է պահանջված լինելու ցուցանիշը, իսկ ժամանակի ընթացքում ավելի ու ավելի կարևորվել:

Սուրճի հատիկը բացահայտվել է Եթովպիայում մոտավորապես 850 թ., սակայն այն լայն ճանաչում ձեռք բերեց սկսած 15-րդ դարից: Հայկական միջավայրում այն տարածվել է դեռևս 17-րդ դարից:

Հայերի կենցաղում սուրճի կիրառության բացահայտումը հիմք հանդիսացավ նյութի գիտական ուսումնասիրող, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ Տաթևիկ Սարոյանին հետազոտել և վեր հանել հայերի պատմական հետագիծը սուրճի պատմությունում: Ուսումնասիրությունը խթանեց «Սուրճի մշակույթի հայկական հետագիծը» խորագրով երկարաժամկետ թանգարանային նախագծի իրականացմանը:

Հոդվածում ներկայացվում է, թե ինչպե՞ս է հնարավոր ուսումնասիրությունը դարձնել թանգարանի երկարաժամկետ նախագիծ, ինչպիսի՞ քայլեր կարող են ձեռնարկել թանգարանները հետպատերազմական ու հետհամաճարակային իրավիճակներում ծառացած մարտահրավերները հաղթահարելու համար: Ներկայացված են հետազոտական աշխատանքի գործնական քայլերը, որոնք անհնարին թվացող ժամանակներում դրական արդյունք են տվել, ինչը կարող է շատ օգտակար ու մոտիվացնող լինել տարբեր թանգարանների զարգացման, նորարար մեթոդների ներդրման ու այցելուների ուշադրությունը գրավելու գործում:

* Ստացվել է 31.03.2024, ուղարկվել է գրախոսման 06.04.2024, ընդունվել է տպագրության 01.07.2024:

Սուրճի մշակույթում հայերի դերի մասին պատմող նյութերի միջոցով փորձ է արվել թանգարանային կրթության տարածքում ներգրավել մեծահասակներին, հայկական պահպանողական այցելուների շրջանակում ձևավորել նոր պատկերացում, թե ինչպիսին կարող են լինել թանգարանային ծրագրերը առօրեականության պատմությանն առնչվող թեմաների մասին, որտեղ յուրաքանչյուր անհատի դերը կարևոր է:

Նախագիծն իրականացնելիս ուսումնասիրվել է միջազգային փորձը՝ պարզելու, թե ինչպես են առօրեականությանն ուղղված թեմաներն իրագործվում թանգարաններում, ինչ արձագանք են գտնում հանրության կողմից, որ դեպքում են դրանք հաջողված համարվում:

Սուրճի ուսումնասիրությունը հայկական իրականության մեջ որպես առանձին ուղղություն, կարելի է ասել, առաջին անգամ է իրականացվել: Նախկինում տարբեր հայ հեղինակների կողմից ուսումնասիրվել են դրվագներ՝ մասնավորապես խորհրդային շրջանը, հայրենադարձությունը: Սակայն հիմնային ուսումնասիրություններ, կարելի է ասել, բացակայում են, ավելին՝ ուշ միջնադարից եկող տեղեկություններն աղբյուրներում սակավ են: Ուստի փորձ է արվել ներկայացնել նաև, թե ինչ վկայություններ կան միջազգային գիտնականների աշխատություններում:

Հավաքագրված նյութերի հիման վրա նախագիծն իրականացնելիս հիմնվել ենք.

1. Ուշ միջնադարի՝ սուրճի պատմահամեմատական փաստերի վրա:

Գիտական փաստերի հավաքագրումից զատ համեմատական ուսումնասիրություն իրականացվել է նաև սուրճին առնչվող համագործակցող կազմակերպությունների շրջանակներում, քանի որ դրանց մի մասը հայաստանյան կազմակերպություններ էին, մի մասը՝ Հայաստանից դուրս գտնվող հայերին պատկանող: Անհրաժեշտ էր պարզել՝ որքանով էր նրանց համար կարևոր Հայաստանում իրականցվող նման ուսումնասիրությունը, ներգրավվածությունը նախագծում և նրանց միջոցով նախագծի ճանաչելի դարձնելը:

2. Իրականացրել ենք նաև դաշտային աշխատանքներ՝ հավաքագրելով տեղեկություններ մասնավորապես 1940-ական թթ. և 2000-ականներին Հայաստան ներգաղթած հայերի շրջանակում: Հավաքված նյութերի հիման վրա համեմատականներ են տարվել տարբեր ժամանակահատվածի ներգաղթյալների, սուրճի կիրառության և հայաստանաբնակների կապի միջև: Այս տեղեկությունների հիման վրա կարողացել ենք հասկանալ տվյալ լսարանի ներգրավվածությունը, որպես համագործակից կողմ և որպես այցելու:

3. Ներկայացվելիք նյութը մշակվել և բաշխվել է ըստ թանգարանային լսարանի՝ այս դեպքում մեծահասակների հետ տարվող աշխատանքի առանձնահատկության մեթոդից ելնելով: Այսինքն հետազոտված նյութը մատուցվել է կրթական միջավայրում՝ ժամանցի չափորոշիչներով:

4. Սրճային զրույցների թեմաները մշակելիս ուսումնասիրել են հայաստանյան և արտասահմանյան գրականությունում, արվեստում առկա սրճային պատմությունները որոնք հնարավորություն ընձեռեցին համեմատականներով ներկայացնել թեմաները:

5. Հավաքագրվել են տեղեկություններ հայկական անցյալում սուրճի կենցաղային ավանդություններից՝ բովելուց, աղալուց, բաժակ նայելու սովորություններից, հարևանական սրճախմություններից: Ընթացիկ քննարկումներին որպես ինտերակտիվ մաս սուրճ հյուրասիրող կազմակերպության ներկայացուցիչներին ներգրավելով, իրականացվել են կարճ զրույցներ սուրճ մշակաբույսի, բովման եղանակների, աղալու մասին:

6. Իրականացրած ծրագրի յուրաքանչյուր փուլում արդյունքների գնահատման մեթոդով կազմվել է նախագծի ուժեղ և թույլ կողմերը, որը նպաստել է ցուցադրության կազմակերպման հարցերում:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի իրականացման նպատակն էր հանրությանը ներկայացնել, թե հայերն ինչ հետագիծ են ունեցել և ունեն ըմպելիքի պատմության մեջ առ այսօր: Որքանով է կարևորվել դեռևս 17-րդ դարից հայ վաճառականների դերը Եվրոպայում, Չինաստանում, Հնդկաստանում սուրճի տարածման գործում: Հետազոտությունները ցույց տվեցին, որ հայկական աղբյուրներում կան սակավ տեղեկություններ, այս թեմայի վերաբերյալ, սակայն օտարալեզու ուսումնասիրողները բազմաթիվ հիշատակություններ են թողել: Նախագծի հիմնաքարը դարձավ այս տեղեկության տարածումը, դրան գումարվեց նաև ըմպելիքի ներկայացումը արևմտահայ և արևելահայ ընտանիքներում, հայրենադարձությունը, սուրճի վերաարժևորումը Խորհրդային Հայաստանում, բռնաճնշումներն ու մտավորականների սրճային պատմությունները և նրանց հավաքատեղի սրճարանները: Այս թեմաները թույլ տվեցին մշակել նախագիծը և առօրեականությանն առնչվող հետազոտությունը ներմուծել թանգարան՝ ներկայացնելով թանգարանային կրթական հարթակից: Թեմաների զանազանությունը հնարավորություն ընձեռեց մշակել շարունակական հանդիպում-քննարկումներ, դրանով իսկ այցելուներին պատրաստել գալիք լայնամասշտաբ ցուցադրությանը: Նշված թեմաներին առնչվող դասախոսությունները, ցուցադրությունը և նախագծի շրջանակում տպագրված ամսագիրը նպատակաուղղված էին իրազեկելու աշխարհի մրցունակ բնամթերքի շուկայում հայերի մասնակցության մասին: Բացի այդ հետպատերազմական և հետհամաճարակային իրավիճակում մտերմիկ հանդիպումները թանգարաններին օգնում են այցելուների հետ տարվող աշխատանքները կազմակերպելուն: Ուստի առօրյա կյանքին առնչվող թեմաները հնարավորություն են ընձեռում ավելի մոտ պահելու թանգարաններին և այցելուներին: Այսինքն թանգարանը բուն կրթական և ժամանցային հարթակից բացի դառնում է հոգեբանական միջավայր՝ վստահության ու ապահովության երաշխիքով:

Բացի վերը նշվածից նաև հետազոտողի և աշխատանքային թիմի համար կարևոր էր անդրադառնալ առօրեականության միկրո պատմություններին, որը վերջին շրջանում բավականին ակտիվ ուսումնասիրության առարկա է դարձել:

Նախագծի մեկնարկ

Նախագծի իրականացումը Հովհաննես Թումանյանի թանգարանում կապված էր առաջին հերթին գրողի կյանքի հուշերում առկա սուրճի մասին տեղեկութ-

յուններով, նաև թանգարանի տարածքի հնարավորություններով: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ թանգարանում կան սուրճի հետ կապված մի շարք հետաքրքիր ցուցանմուշներ, որոնք խոսում են հայ մեծանուն գրողի սրճային զվարճանքների մասին: Օրինակ՝ Թումանյանը սուրճ օգտագործել է ընտանեկան միջավայրում, հյուրասիրել նաև հյուրերին: Նա սուրճ շատ էր խմում հատկապես 1915 թ. Էջմիածնում աշխատելու ժամանակ (Թումանյան 1985, 124): Այս տեղեկությունը ոգևորեց և առիթ տվեց ուսումնասիրելու և համեմատելու հայ և համաշխարհային մտավորականների համար սուրճի դերն ու նշանակությունը:

Արդյունքում մեծ ծավալի բազմաշերտ տեղեկություններ հավաքվեցին, որոնք լայնամասշտաբ ցուցադրության նախադրյալներ ստեղծեցին: Հաշվի առնելով Հովի. Թումանյանի և սուրճի «սերտ» կապը՝ գրողի թանգարանի նախկին տնօրեն Նարինե Թուխիկյանի կողմից ուսումնասիրողը ստացավ առաջարկ՝ հետազոտությունը տեղայնացնել գրողի թանգարանում: Հնարավորություն կար թանգարանի սրահներում որոշակիորեն վերականգնել Վերնատան մթնոլորտը:

Հանգամանքների բերումով 2017 թ. աշխատանքները ընդհատվեցին, և գաղափարը հնարավոր եղավ կյանքի կոչել 2021 թ.:

Նախագծման աշխատանքները սկսեցին իրականացվել թանգարանի այդ ժամանակ նորանշանակ տնօրեն Անի Եղիազարյանի և «Ակտուալ արվեստ» հրատարակչության տնօրեն Մկրտիչ Մաթևոսյանի հետ: Փոքր թիմին աջակցում էին թանգարանի աշխատակիցները:

Հարկ է նշել, որ 2020 թ. մեծ աշխատանք էր տարվել նախագծի մեկնարկի համար: Նախագծվել ու մշակվել էր ծրագիրը գրեթե բոլոր մանրուքներով, սակայն նախ համաշխարհային համաճարակը, ապա Արցախյան 44-օրյա պատերազմը խաթարեցին այն:

Ելնելով նյութի ծավալից՝ որոշվեց իրականացնել երկարաժամկետ նախագիծ (թանգարաններում իրականցվող երկարաժամկետ ծրագրերի մասին տե՛ս Crimm, Morris, Wharton 2009, 12–26, 47–67, 155–199): Մշակվեց ծրագիր, որը ներառում էր ցուցադրություն, ուղեկցվող երեկոներ՝ զրույցներով, դասախոսություններով ու համտեսներով, պատկերագրքի տպագրություն՝ ցուցադրվող ու ցուցադրությունից դուրս մնացած առարկաների ներկայացմամբ:

Պետք է նշենք, որ ցուցադրվող նմուշների 80 տոկոսն առաջին անգամ էին ներկայացվելու:

Համաճարակի ընթացքում ուսումնասիրությունները, ծրագրի մշակումն ու համաձայնությունների ձեռքբերումը հնարավոր էր իրականացնել երբեմն հեռավար ձևաչափով, սակայն 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո մեծ անհանգստություններ կային ցուցադրության կազմակերպման շուրջ. արդյո՞ք նման ծրագիրը հանրությանը ներկայացնելու ժամանակն էր (հետպատերազմական իրավիճակներում թանգարանների կողմից այցելուների շրջանակում իրականացվող աշխատանքների մասին տե՛ս J. Ashley-Smith 2011, 138–161): Երկրում տիրող տրամադրությամբ հասարակությունը որքանո՞վ պատրաստ կլիներ ողջունել նման ցուցադրությունը, այցելել, ակտիվ մասնակցություն ունենալ: Արդյո՞ք հնարավոր կլիներ

գտնել միջոցներ, և ամենակարևորը՝ որքանո՞վ էր անվտանգ 32 թանգարանից և մասնավոր հավաքածուներից բերել 238 առարկա:

Ստեղծված իրավիճակը դրդեց վերաձևափոխել նախագիծը: Հաշվի առնելով մարդկանց հուզական վիճակը, փորձ արվեց ստեղծել հանդիպման տաք, մտերմիկ միջավայր, քանի որ համաճարակի պատճառով մարդիկ ամիսներով դուրս չէին եկել տներից, չէին շփվել մտերիմների հետ, չէին գնացել սրճարաններ ու թանգարաններ, դրան գումարվել էր պատերազմի պատճառով առաջացած հոգեբանական խնդիրները, որոնք ձևավորել էին ընկճախտ: Իմաստազրկվել էր անհատի ինքնավստահությունն ու վաղվա օրվա մասին դրականը փնտրելու հույսը:

Նման ճգնաժամային պայմաններում գիտության ու մշակույթի ոլորտի առաջ ծառանում են բարդ մարտահրավերներ՝ գտնել ելքեր հանրության հետ տարվող աշխատանքների ուղղությամբ: Այս խնդիրը 2020 թ. համաշխարհային էր՝ մտածել ու փնտրել ելքեր, որ «փակի տակ» գտնվող այցելուի մեջ հույս ու ցանկություն արթնանա, որ ապրելու խնդիրներից զատ նախատեսի նաև թանգարաններ այցելել (համաճարակի ժամանակ թանգարանների գործունեության մասին տե՛ս Decter, Semmel, Yellis 2022, 17–25, 57–63):

Աշխատանքային խումբը մեծ պատասխանատվությամբ սկսեց մեկնարկը. զգուշորեն հաշվարկելով ներհայաստանյան հոգեբանական վիճակը՝ մշակեց ռազմավարություն, որի օգնությամբ թանգարանը կդառնար մտերմիկ ու վստահելի միջավայր, որտեղ հնարավոր է ինչ-որ կերպ սփոփել ստեղծված իրավիճակը:

2021 թ. փետրվարին նախագծի նախապատրաստական աշխատանքը մտավ ակտիվ փուլ: Որոշվեց իրականացնել ամենաբաթյա երեկոներ՝ զրույց-քննարկումների ձևաչափով: Դրանց թիրախն այն մարդիկ էին, որոնք սիրում էին սուրճը ու այն նորովի բացահայտելու հնարավորությունը նրանց սիրով կբերեր թանգարան՝ սրճային զրույցին մասնակցելու: Սովորաբար նման մարդիկ դուրս են մնում թանգարանային կրթության միջավայրից, բայց ճգնաժամի հետևանքով մարդկային շփման ու նոր գիտելիք ձեռք բերելու կարիք ունեն (մեծահասակների կրթության մասին տե՛ս Collins(editor), Co-author American Association of Museums, 1981, 73–79, 112–120–131):

Նախագծի մարքեթինգն ու հանրահռչակումը

Ցանկացած նախագծի հաջողություն պայմանավորված է նաև խորագրով, որը պետք է լինի կարճ, գայթակղիչ և հիշվող: Նախագիծը կոչվեց «Սուրճ-սէր-թանգարան», որտեղ մեկտեղվում էին ըմպելիքն ու թանգարանային գործունեությունը: Պատրաստվեց բրենդային փաթեթ, որը ներառեց տարբերանշան, տառատեսակ, բուկլետներ, պոստերներ, հրավիրատոմսեր, տոմսեր, տպավորության գիրք (թանգարանային մարքեթինգի մասին տե՛ս Wallace 2016,1–35, 38–41): Մշակվեցին մարքեթինգային և հանրայնացման աշխատանքներին ուղղված քայլերը:

Մինչ նախագծի մեկնարկը յուրաքանչյուր հանդիպման համար նկարահանվեցին 30 վայրկյան տևողությամբ կարճ հոլովակներ, որոնք անոնսի ձևով պատմում էին զեկուցումների թեմաների մասին: Դրանք հանրությանը հրապուրելու «խայծեր էին»՝ գալիք միջոցառումներին հրավիրելու համար: Հոլովակները տե-

ղադրվեցին Թումանյան թանգարանի յութուբյան ալիքում, որի հղումները տարածվում էին նախագծի համար բացված «Սուրճ-սէր-թանգարան» ֆեյսբուքյան էջում (https://www.facebook.com/SurchSerTangaran):

Բոլոր զրույց-հանդիպումների համար պատրաստվեցին պաստառներ (նկ. 1):

Ողջ երեկոները ուղիղ հեռարձակվում էին ֆեյսբուքում: Դրան զուգահեռ արխիվացնելու նպատակով բոլոր միջոցառումները տեսանկարահանվում ու լուսանկարվում էին: Այդ տեսանյութերը հայաստանյան հեռուստառադիո ընկերությունների կողմից մի շարք հաղորդաշարերի ժամանակ ներկայացվել են հանրությանը:

Երեկոների մեկնարկ

Ամենշաբաթյա երեկոների թեմաները մշակվել էին՝ ելնելով ուսումնասիրության նյութերից, որոնց անդրադարձ էր կատարվելու գլխավոր ցուցադրության ժամանակ: Այդ թեմաները օգնելու էին պատկերացում կազմել սուրճի ու գրականության, կերպարվեստի, երաժշտության և այլ ոլորտների առնչությունների մասին: Թեմաները հետևյալն էին[1].

- Հայոց սրճաշխարհը (բանախոս՝ Արծվի Բախչինյան)
- 1960–70-ական թթ.երևանյան սրճարանները (բանախոս՝ Մարկ Գրիգորյան)
- Սուրճը հայ գրականության մեջ (բանախոսներ՝ Հայկ Համբարձումյան, Արքմենիկ Նիկողոսյան)
- Յ. Ս. Բախի «Սրճային կանտատը» (բանախոս՝ Դանիել Երաժիշտ)
- Սուրճի համաշխարհային պատմությունը և երրորդ ալիքի ծնունդը (բանախոսներ՝ Տաթև Սարոյան, Գարուշ Խաժակյան)
- Սուրճը կերպարվեստում (բանախոս՝ Լիլիթ Սարգսյան)
- Հայկական սրճարաններով դբա Եվրոպայի սիրտը (բանախոս՝ Վահրամ Մարտիրոսյան)
- Սրճաբույր քաղաքի հանրային միջավայրը (բանախոս՝ Գոհար Ստեփանյան)
- Սուրճ. կիրառումից թանգարանացում (բանախոս՝ Տաթև Սարոյան)
- Սուրճ ու շարբաթ կամ հեքիաթներ զմրուխտ գավաթի բերանից (բանախոս՝ Ալվարդ Ջիվանյան)
- Բացահայտումներ մեկ գավաթ սուրճի շուրջ (բանախոս՝ Աննա Սարգսյան) և սուրճն Ասլամազյան քույրերի արվեստում (բանախոս՝ Գոհար Սմոյան)
- Սուրճ-սեր-սիգարետ (բանախոս՝ Դավիթ Մոսինյան)
- Երգ սուրճի բաժակով (բանախոս՝ Անիտա Հախվերդյան)
- Անապատը և սուրճը (բանախոս՝ Հակոբ Միքայելյան), Սուրճ, սրճարան, Իրան (բանախոս՝ Իվեթ Թաջարյան):

Երեկոներն անց էին կացվում ուրբաթ օրերին՝ որպես աշխատանքային շա-

1 2021 թ. Հովհաննես Թումանյանի թանգարանում մեկնարկած «Սուրճ-սէր-թանգարան» խորագրով նախագծի մասին համահավաք հրատարակվել է «Ակտուալ արվեստ» հրատարակչության կողմից տպագրվող հանդեսում, ուր առկա են նշյալ ցանկի ողջ բանախոսությունները («Ակտուալ արվեստ», 2021, հ. 10(15))

բաթվա հաճելի ավարտ: Հանգստյան օրերից առաջ մասնակիցների համար դյուրին էր այցելել ու վայելել զրույցներն ու թանգարանային միջավայրը:

Սրճային երեկոներից առաջինը տեղի ունեցավ 2021 թ. հունիսին: Հովհաննես Թումանյանի թանգարանի այգին ու ամբողջ բակը կահավորվել էր հին աթոռներով, ինչը ջերմ զգացողություններ էր առաջացնում՝ այցելուներին ներգրավելով անմիջական միջավայրում (նկ. 2–3):

Գործընկերների ձեռքբերում

Երեկոների բանախոսությունները ուղեկցվում էին սուրճի հյուրասիրությամբ:

Համագործակցություն սկսվեց Հայաստանում և Հայաստանից դուրս գործող սուրճի մասնագիտացված խանութների հետ, որոնք Հայաստան են ներմուծում բարձրորակ սուրճ և ունեն իրենց հաջողության պատմությունները և սուրճը խմելու խորհուրդները: Հիմնական բանախոսի խոսքից հետո ներկաներին ներկայացվում էր սուրճի հատիկի, բովելու, աղալու մասին և այլ տեղեկություններ, որպեսզի հյուրերը պատկերացնեին ըմպելիքի առանձնահատկություններն ու մշակույթը: Որքան էլ մարդիկ ընդհանուր պատկերացում ունեին սուրճի մասին, մանրամասն ու երբեմն մասնագիտական տեղեկությունները նորություն էին շատերի համար:

Գործընկերների շարքերը համալրել էին այն կառույցները[2], որոնք Հայաստանում գործում էին վերջին տարիներին: Նախագիծը դարձավ հարթակ իրենց տեսականին ներկայացնելու և պոտենցիալ գնորդներ ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր երեկոյի ժամանակ, ըստ բովանդակության, մատուցվում էր համապատասխան սուրճ (ինչպես գտնել հովանավորներ տե՛ս Hewlett 2013, 13–87) :

Բացի ընդհանուր հրավերից, որը տարածվում էր սոցցանցերի միջոցով՝ նաև անվանական հրավերներ էին ուղարկվում մարդկանց, որոնց կարող էր տվյալ թեման հետաքրքրել: Սակայն պետք է նշել, որ քովիդի համաճարակի սահմանափակումների պատճառով ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային միջոցառումները թույլ էր տալիս իրականացնել սահմանափակ լսարանի շրջանակում՝ ամենաշատը 50 անձ: Բայց մասնակիցներից շատերին այնքան էր դուր գալիս ձևաչափը, որ հաջորդ հանդիպումներին իրենց մտերիմների հետ էին գալիս: Այդ իսկ պատճառով երեկոների մասնակիցների թիվը հասնում էր մինչև 100 մարդու՝ անկախ սահմանափակումներից: Ստացած տպավորությունների հետևանքով այցելուներից շատերի համար ուրբաթ երեկոների այցերը դառնում էին շարունակական:

Երեկոների մեկնարկը տրվեց հունիսի 4-ին և իրականացվեց մինչև հուլիսի վերջին ուրբաթը՝ հուլիսի 30-ը: Հանդիպում-զրույցների շարքը վերսկսվեց սեպտեմբերին ու շարունակվեց մինչև հոկտեմբերի 8-ը: Իրականացվեց թեմաներին առնչվող 14 երեկոներ: Աշնանային փուլն անցկացվեց դահլիճում, որի համար Հովհաննես Թումանյանի թանգարանի մի մասը վերաձևավորվեց որպես սրճարանային միջավայր: Այսինքն հատուկ այս միջոցառումների համար ստեղծվում էր

2 Նախագծին աջակցել են. Hanry's house of coffee (Սան Ֆրանցիսկո), Coffee Inn (Երևան), Nero Bean (Երևան), Tea and Co (Երևան), Herbs and Honey (Գյումրի), Sorriso (Երևան), Caffeine Coffee Roasters (Դիլիջան), Lumen (Երևան), Lara Chocolate (Երևան), Wine Art (Երևան), Kav keramics (Երևան):

համապատասխան տրամադրող միջավայր՝ համապատասխան կահույքով, սուրճի համտեսներով և անգամ հաշվի էր առնվում հրավիրյալների փոխադարձ հետաքրքրությունները, որպեսզի հնարավորինս անկաշկանդ լիներ միմյանց հետ հաղորդակցվելը:

Երեկոներն ուղեկցվում էին նաև թանգարանային կրթության մեջ առկա hands-on (թանգարաններում կիրառվող hands-on գործունեության մասին տե՛ս Donaldson 2006, 10–21) բաղադրիչով, որը նշանակում է մասնակցել գործընթացի: Ինտերակտիվությունն ապահովելու համար հանդիպումներից մեկի ժամանակ մասնակիցները կավից սուրճի բաժակներ պատրաստեցին, մեկ այլ երեկոյի ընթացքում հյուրերը տարատեսակ սրճաղացներով սուրճ աղացին, որպեսզի վերհիշեն 1980–90-ական թթ. իրենց տներում առկա սրճաղացներով սուրճ աղալու սովորությունը: Սուրճ աղալը վերածվեց մրցույթի. ով ավելի շատ սուրճ աղաց, հովանավորների կողմից նվերներ ստացավ (նկ. 4):

Երեկոները ունեին նաև երաժշտական ձևավորում: Տվյալ օրվա թեմային բնորոշ երաժշտական համարներ էին կատարվում: Օրինակ «Երևանյան սրճարանները 1960–70-ական թթ.» երեկոյի ժամանակ հնչում էին այդ տարիների հայտնի երգերը կամ այն երաժշտությունը, որն այդ շրջանում արգելված էր Խորհրդային Միությունում, իսկ դրանց սկավառակները սրճարաններում ծպտյալ կերպով փոխանցում էին միմյանց:

Իրականացված երեկոների շրջանակում «Ակտուալ արվեստ» հրատարակչության կողմից տարեկան հրատարակվող հանդեսներից մեկն ամբողջությամբ նվիրվեց այս իրադարձություններին (Ակտուալ արվեստ-Սուրճ-սէր-թանգարան, 2021):Մասնակիցների ընդհանուր թիվը կազմեց 800 առկա և 9000 հեռավար ունկնդիրներ:

Երեկոներն այնքան տպավորիչ էին, որ անգամ ավարտից հետո հյուրերը երկար մնում էին, կիսվում իրենց տպավորություններով, որ իսկապես իրենց լիցքաթափված և խաղաղված էին զգում, համընդհանուր լարվածությունից կտրված (նկ. 5):

Այս կարծիքներն օգնեցին հասկանալ, որ նախագծի առաջին փուլը մեծ արձագանք է գտել հանրության կողմից: Դա նախագծի կազմակերպիչներին ոգեշնչելու էր, որ ավելի մեծ նվիրումով սկսեն աշխատել ցուցադրության ուղղությամբ:

Ցուցադրության նախագծում և պլանավորում

Դրամահավաք և գործընկերներ

Ցուցադրության խմբում աշխատել են գիտական նյութի համադրող Տաթևիկ Սարոյանը, ցուցադրության հայեցակարգի կազմողներ Անի Եղիազարյանը, Մկրտիչ Մաթևոսյանը:

Ցուցադրության համար անհրաժեշտ միջոցների համար որոշվեց իրականացնել դրամահավաք ԱՄՆ-ում գործող *gofundme* կայքի օգնությամբ[3]:

3 https://www.gofundme.com/f/The-Culture-of-Coffee-The-Armenian-Trajectory

Նախագծի գլխավոր հովանավորը դարձավ Սան Ֆրանցիսկոյում բնակվող Քալեբջյան ընտանիքի «Հենրիի սուրճի տունը», որը շուրջ 50 տարուց ավելի զբաղվում է սուրճի բիզնեսով:

Լինելով գլխավոր հովանավոր՝ Քալեբջյան ընտանիքը ամենշաբաթյա երեկոներից մեկի ժամանակ ներկայացրեց իրենց ընտանիքի պատմությունն ու բիզնեսը: Ներկա գտնվեցին նաև ցուցադրությանը:

Կայքի օգնությամբ նաև այլ անհատներ մասնակցեցին դրամահավաքին:

Ցուցադրության համար անհրաժեշտ ֆինանսի մնացած մասը հոգաց Հովհաննես Թումանյանի թանգարանը:

Ցուցադրությանը հաջորդող երեկոները կրկին ուղեկցվում էին սուրճերի համտեսներով, որոնց մասնակցում էին նախորդ տարվա գործընկերները:

Այս տարիների ընթացքում հետազոտական աշխատանքների ընթացքում կազմվել էին ցուցադրվող առարկաների ցանկերը, դուրս էին բերվել անոտացիոն և բացատրական տեքստերի համար անհրաժեշտ տեղեկությունները, որոնք նպաստեցին ցուցադրության նախապատրաստական աշխատանքների արագ կազմակերպմանը: Ցուցադրության աշխատանքային ողջ ընթացքը՝ համագործակից թանգարաններից առարկաների տեղափոխություն, ցուցադրական կահույքի պատրաստում, անհրաժեշտ նյութերի տպագրություն, տևեց 2 ամիս, իսկ մոնտաժային աշխատանքները՝ 15 օր:

Ցուցադրության ուղղությամբ իրականացված մարքեթինգը և հանրահռչակումը

Ցուցադրության նախապատրաստական բոլոր փուլերը տեսանկարահանվեցին և լուսանկարվեցին: Նկարահանված նյութի հիման վրա պատրաստվեցին հոլովակներ, որոնք տեղադրվեցին նախագծի ֆեյսբուքյան էջում, Հովհաննես Թումանյանի թանգարանի պաշտոնական կայքում և յութուբյան ալիքում: Մշակվեցին հետևյալ մարքեթինգային քայլերը (թանգարանային մարքեթինգի մասին տե՛ս French, Runyard 2011).

1. Ցուցադրության կազմակերպիչները հանդիպում ունեցան Հայաստանի տուրիզմի պրոֆեսիոնալ ասոցիացիայի անդամների հետ, պատմեցին գալիք ցուցադրության և ուղեկցող միջոցառումների մասին: Վերջինս ներառում էր հետևյալ փաթեթը. հանդիպում-քննարկումներ հետազոտող մասնագետի հետ, շրջայց, սրճախմություն և խորհրդատվություն սուրճի վերաբերյալ: Այցի ավարտին այցելուն կարող էր գնել նաև հուշանվերներ, որոնք հատուկ պատրաստվել էին նախագծի համար:
2. Հուշանվերների գործում համագործակցություն ծավալվեց «Տերյան» մշակութային կենտրոնի և տարբեր արվեստագետների հետ, որոնց կողմից պատրաստվեցին սուրճի բաժակներ, սրճեփներ, զարդեր, շարֆեր, սփոռոցներ, բարձեր և այլն: Նշված հուշանվերները պատրաստված էին ցուցադրության շրջանակում և կարելի էր գտնել միայն թանգարան այցելելով:
3. Ցուցադրության մեկնարկն ազդարարելու համար օգտագործվել էին թանգարան բերող աստիճանները: Դրանք հարմար էին ձևավորման հա-

մար: Նախապես ուսումնասիրվեց ու ընտրվեց այն նյութը, որով քարե աստիճանների վրա գրաֆիտիի ոճով գրվեց սուրճ բառը՝ տարբեր լեզուներով ու հայերենի բարբառային տարբերակներով՝ սուրճ-ղահվե-ղափա, coffee-kahve-kape և այլն: Այս քայլը հնարավորություն էր տալիս այցելուներին հենց մուտքից ընկղմվել ցուցադրության թեմայի մեջ և ընթերցելով գրված բառերը՝ որոշակի պատկերացմամբ մտնել թանգարան: Իսկ կենտրոնական մուտքին ամրացվել էր ցուցադրության մեծ պաստառը (նկ. 6):

4. Ցուցադրությունը լուսաբանվեց ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հեռուստառադիո հաղորդաշարերի եթերներում, ներկայացվեց առցանց մամուլի 10 և ավել հարթակներում՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով[4] :
5. Հանրահռչակման գործընթացը շարունակվում է առ այսօր: Նյութի ուսումնասիրող Տաթևիկ Սարոյանը տեղական ու միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների, կրթամշակութային հաստատություններում հանդիպումների և հոդվածների տեսքով պարբերաբար անդրադառնում է նախագծին, ներկայացնում ոչ միայն սուրճի հայկական հետքը, այլ նաև այն թանգարանում մատուցելու նորարար ու ինտերակտիվ մեծ հնարավորությունները:

Ցուցադրության նորարար մոտեցումները

Թանգարաններում առկա անոտացիոն տեքստերը ցուցադրությունների կարևոր բաղադրիչն են. դրանք միշտ մտածելու տեղիք են տալիս: Շատ կարևոր է ճիշտ ընտրել ու գրագետ ներկայացնել տեքստերը (թանգարանային տեքստերի մասին տե՛ս B. Serrell 1996, 261), որ այցելուն հաճույքով կարդա և չձանձրանա:

«Սուրճի մշակույթի հայկական հետագիծը» ցուցադրությունը գտնվում էր Թումանյանի թանգարանի երկրորդ հարկում: Սրահ ուղղորդող աստիճանների պատերը օգտագործվել էին անոտացիոն տեքստերի և լուսանկարների համար: Բարձրանալիս այցելուները կարդում էին տեղեկություններ, որոնց առարկայական ապացույցները տեսնելու էին բուն ցուցասրահում:

Քանի որ հայեցակարգում մշակվել էր ձեռագրով գրելու գաղափարը, որպեսզի գրված նյութն ավելի մտերմիկ ու անմիջական լինի, պատերի տեքստերը գրվեցին գյումրեցի երեք նկարչի՝ Լևոն Ֆլջյանի, Կարեն Բարսեղյանի, Հրաչյա Վարդանյանի կողմից:

Բուն ցուցադրությունը հագեցած էր բազմաշերտ, նորարար լուծումներով. ցուցափեղկեր՝ ըստ ցուցադրության բրենդի գույների, ցուցադրական խորշերով արհեստական պատեր, ձեռքով նկարված՝ հայ մտավորականների մեծադիր

4 Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, Հայաստանի հանրային ռադիո «Ինքնություն», «Վերնատուն» հաղորդաշարեր, Շողակաթ հեռուստաընկերություն, Մեդիամաքս, Բուն TV, Ամերիկայի ձայն, Curier de Erevan, Հայ-ֆրանսիական առևտրաարդյունաբերական պալատ և այլն:

պատկերներ[5], որոնց առջև դրված ցուցափեղկերում ցուցադրվում էին իրենց սուրճի բաժակները (նկ. 7)։

Պատերից մեկը ծածկվեց Խորհրդային տարիների սրճարանային լուսանկարի պաստառով, որի առջև տեղադրվեց 1960-ական թթ. երևանյան սրճարանի կահույք. այցելուները կարող էին նստել և լուսանկարվել։ Այսինքն ցուցադրությունը ուներ ակտիվ հատվածներ, որտեղ ցուցադրական իրերին կարելի էր ձեռք տալ և նկարվել։

Մյուս պատը ծածկվեց թբիլիսյան Վերնատան լուսանկարով՝ խորհրդանշելով Հովհաննես Թումանյանի հանդիպումը մտավորականների հետ (նկ. 8)։

Մեկ ամբողջական պատին ցուցադրված էին սուրճի թեմայով կերպարվեստի նմուշներ, որոնք բերվել էին Հայաստանի ազգային պատկերասրահից և Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահից։ Պատը նախապես ծածկվել էր սրճագույն պաստառով, որից կախվեցին նկարները։

Պիտակների լուծումը նույնպես տարբերվող էր։ Նկարներն ունեին համարներ, իսկ կից պատի վրա փակցվեցին նույն ստեղծագործությունների փոքր լուսանկարները և ձեռքով գրվեցին պիտակային տեղեկությունները։

Առանձին հատված հատկացվել էր Խորհրդային շրջանին։ Ներկայացվել էր 1970-ական թթ. Երևանում գործող «Վահագն» սրճարանը, որը զարդարված է եղել Վան Խաչատուրի «Վահագն վիշապաքաղի» քանդակադրոշմով, ինչի մի մասը՝ վիշապը, ժամանակի ընթացքում անհետացել էր սրճարանից։ Ցուցադրության համադրող Մկրտիչ Մաթևոսյանը նախաձեռնեց պատից ամրացնել Վահագնի պատկերը, և որպեսզի ստեղծագործությունը ամբողջական լինի քանդակադրոշմի անմիջապես կողքին՝ պատի վրա, պատկերեց վիշապին՝ իրական չափերով, որպեսզի այցելուները հասկանային ստեղծագործության իրական պատկերն ու չափերը (նկ. 10)։ Խորհրդային շրջանի միջավայրն ամբողջացնում էր սուրճի սպասքի ցուցադրությունը։

Այս պատի առջև դրված էր Խորհրդային սրճարանին բնորոշ բնօրինակ կահույք, որին թույլատրվում էր նստել, հանգստանալ, զգալ ինչպես սրճարանում, սուրճ ըմպել, որը մատուցվում էր թանգարանի աշխատակիցների և կամավորների կողմից։

Սա շատ ակտիվ անկյուն դարձավ ու հարմար էր, որ հատկապես երիտասարդները նկարվեն, սոցիալական հարթակներում հրապարակեն նկարներն ու պատմեն տպավորությունների մասին, ինչը նպաստեց նոր լսարանների ներգրավմանը։

Ցուցադրության ավարտին այցելուներն անցնում էին տեսասրահի միջով, որտեղ ներկայացվում էին Եվրոպայում 17-րդ դարում հայերի կողմից բացված առաջին սրճարանների մասին պատմող հոլովակ։

Ցուցադրությունից դուրս գալուց այցելուն անցնում էր հուշանվերների տա-

5 Հայ մտավորականների պատկերների էսքիզներն արվել են ԱՄՆ-ում բնակվող Լևոն Գյուլխասյանի կողմից, իսկ արտատպվեցին՝ գյումրեցի նկարիչ Լևոն Ֆլջյանի և Կարեն Բարսեղյանի կողից։ Նման կերպ ցուցադրության թիմը ներգրավեց արտասահմանում և Հայաստանի տարբեր մարզերում ապրող ստեղծագործողների։

ղավարով և տպավորված լինելով ցուցադրությունից՝ կարող էր հուշանվեր ձեռք բերել: Այս քայլը շատ կարևոր մարքեթինգային մոտեցում է. այնպես կառուցել ցուցադրությունները, որ երթուղին անցնի հուշանվերների կրպակով (թանգարանային հուշանվերների մասին տե՛ս Theobald 2000, 17–34):

Ցուցադրության 2 ամիսների ընթացքում շարունակվեց ուրբաթ երեկոների ավանդույթը: Ամեն ուրբաթ երեկոյան համագործակից թանգարաններից մեկը ներկայացնում ու պատմում էր իրենց ցուցանմուշների մասին: Մինչ բուն բանախոսությունը նյութի հետազոտող Տաթևիկ Սարոյանը իրականացնում էր համադրողական շրջայց, որի ժամանակ այցելուները ունկնդրում էին ոչ միայն ցուցադրական նյութի պատմությունները, այլև նախագծի մի շարք կարևոր հարցադրումների, թանգարանագիտական մոտեցումների մասին:

Ցուցադրությունում կամավորների ներգրավումը

Նախագծի մեկնարկի օրից մինչև ցուցադրության ավարտը աշխատանքային խմբում ներգրավված են եղել կամավորներ (թանգարաններում կամավորական աշխատանքի մասին տե՛ս S.Goodlad, S.McIvor 2005, 9–21,89–92) Երևանի ավագ դպրոցներից և ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներից[6]: Նրանց օգնությամբ կազմակերպվում էին միջոցառումների նախապատրաստական աշխատանքները, հյուրերի ընդունելությունը:

Ցուցադրության մեկնարկից երկու ամիս առաջ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հինգ ուսանողների հետ աշխատանքներ տարվեցին՝ պատրաստելով էքսկուրսիաներ վարելուն: Ընտրվել էին այնպիսի ուսանողներ, որոնք հայերենին զուգահեռ կարողանում էին էքսկուրսիաներ անցկացնել անգլերենում ու ռուսերենում: Կամավորների ներգրավման շնորհիվ հնարավորինս թեթևացավ Հովհաննես Թումանյանի թանգարանի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը: Բացի այդ, ուսանողների շնորհիվ էքսկուրսիաներն ավելի դինամիկ էին դառնում:

Սովորաբար նման մոտեցում հայաստանյան թանգարաններում ցուցադրությունների շրջանակում չի իրականացվել, սակայն պետք է նշել, որ այն բավականին արդյունավետ եղավ ինչպես թանգարանի, այնպես էլ այցելուների և կամավորների համար: Վերջիններս, բացի ձեռք բերած գիտելիքներից ու փորձից, ծրագրի ավարտին ստացան նաև վկայականներ:

Եզրակացություն

Այս աշխատությամբ փորձ արվեց ներկայացնել «Սուրճի մշակույթի հայկական հետագիծը» նախագիծը, որը կարող է լավ օրինակ լինել մյուս թանգարանների աշխատակիցների ու հետազոտողների համար: Հայաստանի թանգարանային դաշտում այս երկարաժամկետ ծրագիրը հնարավորություն տվեց ներգրավել պասիվ թիրախային խմբերից մեծահասակներին: Դրանով իսկ կոտրեց կարծրատի-

6 Նախագծի կամավորներ. Լիլիա Հոռոփյան, Արփի Աբաջյան, Գոհար Մարության, Սյուզի Նորոյան, Նատալի Տեր-Դավթյան, Նորիկ Սահակյան, Ռոբերտ Գասպարյան:

պերը, որ թանգարանային կրթությունը միայն դպրոցահասակների համար է:

Փորձ արվեց ներկայացնել թանգարանային ոլորտի տարբեր բաժինների՝ ցուցադրական, կրթական, հանրահռչակման, մարքեթինգի, ֆոնդային աշխատանքների համախմբումը և դրանց թիմային աշխատանքի հսկայական արդյունքը:

Նախագծի իրականացումը և այցելուների հետազոտությունը հնարավորություն ընձեռեց հասկանալու, թե որքանով է մեր հասարակությունը պատրաստ մասնակցելու նման առօրյա թեմաներին առնչվող միջոցառումների: Բացի այդ թանգարանների պահպանողական մոտեցումներից անցում կատարվեց խոսելու և ներկայացնելու կենցաղի մի թեմա, որն ավելի անմիջական դարձրեց թանգարան-այցելու կապը: Պետք է նշել, որ նախագծի ավարտից հետո հայաստանյան թանգարանների աշխատակիցների կողմից նկատվում է նման թեմաների անդրադարձ թանգարաններում:

Ծրագիրը հնարավորություն տվեց նախանշված նպատակները հասցնել ոչ միայն հայաստանյան, այլև արտասահմանյան լսարանին: Բացի այդ այս նախագծի իրականացումը հետազոտողին հնարավորություն տվեց իր ուսումնասիրության մեջ անդրադառնալ մի շարք նոր ենթաթեմաների:

Նախագծի ավարտից հետո՝ 2022 թ. առ այսօր հետազոտողի կողմից այն ներկայացվել է ԻԿՕՄ-ի (Թանգարանների միջազգային կոմիտե) 26-րդ վեհաժողովի ժամանակ, Բրիտանական թանգարանում, Մարսելի և Գրենոբլի հայկական մշակույթի տներում, ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնում, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում, «Ազգային դպրոց» նախագծի շրջանակում:

Պետք է ասել, որ երկարաժամկետ ծրագրերը կարող են լավ ավանդույթ դառնալ հետազոտող-թանգարան-այցելու համագործակցության շղթայում, ուր հետազոտողը գտնում է ոչ միայն ուսումնասիրություններին բնորոշ նյութեր, այլև թանգարանի միջոցով ստեղծվում է կամուրջ՝ այն հասցեագրելու թիրախային լսարանին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԹՈՒՄԱՆՅԱՆ 1987 – Թումանյան Ն., *Հուշեր և գրույցներ*, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1987:

ASHLEY-SMITH 2011 – Ashley-Smith J., *Risk Assessment for Object Conservation*, “Routledge Taylor & Francis Group” publisher, London and New York, 2011:

COLLINS(EDITOR) 1981 – Collins Z. W. (editor), Co-Author American Association Of Museums, *Museums, adults, and the humanities: a guide for educational programming*, “American Association of Museums”publisher, Washington, D.C., US, 1981.

CRIMM, MORRIS, WHARTON 2009 – Crimm W.L, Morris M., Wharton C. L., *Planning Successful Museum Building Projects*, “AltaMira Press”, Lanham, US, 2009:

DECTER, MARSHA, SEMMEL 2022 – edited by Decter A.Y., Samuel L.,.Yellis K, *Change is required: preparing for the post-pandemic museum*, “Rowman & Littlefield”publisher, London , UK, 2022.

DONALDSON 2006 – Mindi Donaldson, *Virtual Destinations and Student Learning in Middle School A Case Study of a Biology Museum Online*, “Cambria” Press, 2006.

FRENCH, RUNYARD 2011 – Y. French, S. Runyard, *"Marketing and Public Relations for Museums, Galleries, Cultural and Heritage Attractions"*, Routledge press, London, UK, 2011.

GOODLAD, MCIVOR 2005 – Goodlad S., McIvor S., *Museum Volunteers, Good Practice in the Management of Volunteers*, "Taylor & Francis" publisher, Abingdon, UK, 2005:

HEWLETT 2009 – Hewlett S.A, *Forget a Mentor, Find a Sponsor The New Way to Fast-track Your Career*, "Harvard Business Review Press", Boston Massachusetts, 2009.

SERRELL 1996 – Serrell B., *Exhibit Labels, An Interpretive Approach*, "Alta Mira" Press, 1996.

THE CULTURE OF COFFEE – The Armenian Trajectory https://www.gofundme.com/f/The-Culture-of-Coffee-The-Armenian-Trajectory , բեռնված օրը՝ 13.01.2024

THEOBALD 2000 – Theobald M. M., *Store Management*, "AltaMira" Press, Lanham, US, 2000.

WALLACE 2006 –Wallace M., *Museum Branding How to Create and Maintain Image, Loyalty, and Support*, "Rowman & Littlefield" publisher, London, UK, 2006.

Tatevik Saroyan
PhD Student

"Matenadaran" Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts
saroyantatev@gmail.com

A MUSEUM PRESENTATION OF THE HISTORY OF COFFEE EVERYDAY LIFE AND A LIFELONG LEARNING COMPONENT

Keywords: museology, education, exhibition, combination, marketing-fundraising, research, coffee.

With this work, an attempt was made to present the "Trajectory of Armenian Coffee Culture" project, which could be a good example for the staff and researchers of other museums. In the Armenian museum field, this long-term program enabled the involvement of adults from passive target groups. With that, it broke the stereotype that museum education is only for school children.

An attempt was made to present the consolidation of various departments of the museum sector: exhibition, education, PR, marketing, fundraising and teamwork.

The implementation of the project and the survey of visitors provided an opportunity to understand how much our society is ready to participate in events related to such everyday topics. In addition, there was a transition from the conservative approaches of museums to talking and presenting a topic of everyday life, which made the museum-visitor connection more direct. It should be noted that after the completion of the project, Armenian museum employees refer to such topics in the museums.

The program made it possible to deliver the stated goals not only to the Armenian, but also to the foreign audience. In addition, the implementation of this project gave the researcher the opportunity to address a number of new sub-topics in her study.

After the completion of the project, from 2022 until today it has been presented by the researcher Tatevik Saroyan in the national and international conferences, workshops. During the 26th general conference of ICOM (International Council of Museums), in the British Museum, in the Armenian Culture Houses of Marseille and Grenoble, in Yerevan State University's Department of Cultural Studies, in the Mkhitar Sebastasi School, within the framework of the "National School" project.

We can assert that long-term projects have the potential to establish a beneficial tradition within the collaboration among researchers, museums, and visitors. In this dynamic, researchers not only procure materials for their studies but also, via the museum, facilitate a bridge to effectively disseminate the findings of their research to the intended audience.

Татевик Сароян
Аспирант

“Матенадаран” Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца
saroyantatev@gmail.com

МУЗЕЙНАЯ ПРЕЗЕНТАЦИЯ ИСТОРИИ ПОВСЕДНЕВНОСТИ КОФЕ И ЕЕ КОМПОНЕНТ В НЕПРЕРЫВНОМ ОБРАЗОВАНИИ

Ключевые слова: музееведение, образование, выставка, комбинация, маркетинг-фандрайзинг, исследования, кофе.

Данной работой предпринята попытка представить проект «Армянская траектория кофейной культуры», который может стать хорошим примером для сотрудников и исследователей других музеев. Этот долгосрочный проект, осуществленный в музейной сфере Армении, позволил привлечь взрослых людей, как одну из пассивных целевых групп. Этим самым были сломаны стереотипы о том, что музейное образование предназначено только для детей школьного возраста.

Была сделана попытка представить объединение выставочного, образовательного, просветительного, маркетингового, фондового отделов музейной сферы, и показать колоссальный результат их командной работы.

Реализация проекта и опрос посетителей дали возможность понять, насколько наше общество готово участвовать в мероприятиях, связанных с такого рода повседневными темами. Кроме того, произошел переход от консервативного подхода музеев к разговорному , и представлению темы повседневной жизни, что сделало связь музей-посетитель более прямой. Следует отметить, что после завершения проекта сотрудники армянских музеев неоднократно обращались к подобным музейным темам.

Программа позволила донести заявленные цели не только до армянской, но и зарубежной аудитории. Кроме того, реализация данного проекта дала исследователю возможность затронуть ряд новых под тем в своем исследовании.

После завершения проекта в 2022 году до сегодняшнего дня он был представлен исследователем Татевик Сароян на 26-й ассамблее ИКОМ (Международный комитет музеев), в Британском музее, в Домах армянской культуры Марселя и Гренобля, на кафедре культурологии Ереванского Государственного Университета, в школе Мхитара Себастаци - в рамках проекта «Национальная школа».

Можно сказать, что долгосрочные проекты могут стать доброй традицией в цепочке сотрудничества исследователь-музей-посетитель, где исследователь находит не только типичные для исследования материалы, но и через музей создается мост для направления на определенную аудиторию.

Տաթևիկ Սարոյան

ՍՈՒՐՃԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

Նկ.1. 2021 թ. ուրբաթ երեկոներից «Անապատը և սուրճը» (բանախոս՝ Հակոբ Միքայելյան), «Սուրճ, սրճարան, Իրան» (բանախոս՝ Իվետ Թաջարյան) խորագրով հանդիպման պաստառը

Նկ. 2-3. «Սուրճը հայ գրականության մեջ» (բանախոսներ՝ Հայկ Համբարձումյան, Արքմենիկ Նիկողոսյան) խորագրով երեկոյի ժամանակ

Նկ. 4 Kav Ceramics արվեստանոցի ղեկավար Շուշան Պետրոսյանի կողմից իրականացվեց սուրճի բաժակներ պատրաստելու դասը: Դասընթացին մասնակցեցին Հայուհիների ակումբի մասնակիցները

Նկ. 5. Երեկոները փակվում էին խմբանկարով

Նկ. 6 Թանգարանի մուտքի ցուցադրության կամավոր Գոհար Մարությանի կողմից աստիճաններին գրվում էր սուրճ բառը տարբեր բարբառներով և լեզուներով

Նկ. 7. 2022 թ. «Սորճի մշակույթի հայկական հեպագիծը» խորագրով ցուցադրությունից

Նկ. 8-9. «Վերնապան» մոտիվները ցուցադրությունում

Նկ. 10. «Վահագն վիշապաքաղի» քանդակադրոշմը